

Կ-153-22.11.2012-ԳԿ-010/2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՕ-119 օրենքի 16-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

#### **<< Հոդված 16. Գիտական կադրերի պատրաստումը: Գիտական աստիճանները և գիտական կոչումները**

1. Գիտական կադրերի պատրաստման հիմնական ձևերն են՝ ասպիրանտուրա, դոկտորանտուրա և հայցորդների համակարգ: Ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում, ինչպես նաև հայցորդների ուսուցման կարգը սահմանում է կառավարությունը:

2. Հայաստանի Հանրապետությունում սահմանվում են գիտության դոկտորի և գիտության թեկնածուի գիտական աստիճաններ, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

3. Գիտական աստիճանները շնորհում են գիտական կազմակերպություններին կամ բարձրագույն ուսումնական հաստատություններին առընթեր մասնագիտական խորհուրդները: Գիտական աստիճանների շնորհման որոշումները հաստատում և համապատասխան վկայագրերով ամրագրում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգը, ինչպես նաև վկայագրերի նմուշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Գիտական կոչումները շնորհվում են գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդները: Գիտական կոչումների շնորհման որոշումները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է կրթության պետական կառավարման լիազորված մարմինը:

Գիտական կոչումների շնորհման կանոնակարգը, ինչպես նաև դիպլոմների նմուշները հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, ովքեր բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած գիտական աստիճանաշնորհման չափանիշներին:

*Բարձրաստիճան պաշտոնատար անձինք գիտական աստիճանի չեն կարող հավակնել, բացառությամբ այն անձանց, որոնց արենախոսության թեմաները հաստատվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդների կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը:*

Գիտական կոչման կարող են հավակնել այն անձինք, ովքեր զբաղվում են գիտամանկավարժական գործունեությամբ և բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած գիտական կոչումների շնորհման *չափանիշներին* :

6. Գիտական աստիճանները և (կամ) կոչումները, որոնք շնորհվել են նախկին ԽՍՀՄ-ի և ՌԴ-ի կողմից մինչև 1994 թվականը, պահպանում են իրենց իրավաբանական ուժը և հավասարեցվում են դրանից հետո շնորհված գիտական աստիճաններին և (կամ) կոչումներին:>>:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ**

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ արված դիտողությունների և

առաջարկությունների մասին

Առարկության, առաջարկության հեղինակը, Գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>1. ՀՀ Կառավարություն</p>	<p>ՀՀ Ազգային ժողովի 2013 թվականի փետրվարի 6-ի նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում (այսուհետ՝ նախագիծ) առաջարկում են հետևյալ փոփոխությունները և լրացումները՝</p> <p>1. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում &lt;&lt;Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի &lt;&lt;Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը&gt;&gt; գործակալությունը՝ հիմք ընդունելով որակավորման գործի ուսումնասիրությունը&gt;&gt; բառերը փոխարինել &lt;&lt;կրթության պետական կառավարման լիազորված մարմինը&gt;&gt; բառերով:</p> <p>2. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 16-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել նոր</p>	<p>Ընդունվել է:</p> <p>Ընդունվել է:</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող 16-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում կատարված փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ &lt;&lt;Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողովը&gt;&gt; գործակալությունը հանդիսանում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության առանձնացված ստորաբաժանումը:</p> <p>2. Նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մասը նոր խմբագրությամբ շարադրելով՝ հանվել են &lt;&lt;գիտության տվյալ բնագավառում ունեն որոշակի գիտական ավանդ և&gt;&gt; բառերը և այն լրացվել է &lt;&lt;Գիտական աստիճանի</p>

	<p>խմբագրությամբ. &lt;&lt;5. Գիտական աստիճանի կարող են հավակնել այն անձինք, ովքեր բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած գիտական աստիճանաշնորհման չափանիշներին:</p> <p>Բարձրաստիճան պաշտոնատար անձինք գիտական աստիճանի չեն կարող հավակնել, բացառությամբ այն անձանց, որոնց ատենախոսության թեմաները հաստատվել են բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդների կողմից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը:</p> <p>Գիտական կոչման կարող են հավակնել այն անձինք, ովքեր զբաղվում են գիտամանկավարժական գործունեությամբ և բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած գիտական կոչումների շնորհման չափանիշներին:&gt;&gt; :</p>		<p>չեն կարող հավակնել բարձրաստիճան պաշտոնատար անձինք՝ իրենց պաշտոնավարման ընթացքում&gt;&gt; բառերով, դա հիմնավորվում է նրանով, որ հստակ և չափելի չէ &lt;&lt;որոշակի ավանդ&gt;&gt; հասկացությունը:</p>
<p>2. &lt;&lt; Ազգային ժողովի պատգամավոր Հ.Բաբաուխանյան</p>	<p>1) 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված &lt;հոդված 16&gt;ը լրացնել 1.1 կետով. &lt;&lt;1.1Գիտական որակավորման չափանիշները սահմանում է կառավարությունը, իսկ դրանց համապատասխան գիտական աստիճանների և գիտական կոչումների շնորհման պարբերական գործընթացը կազմակերպում է &lt;&lt; բարձրագույն որակավորման հանձնաժողովը, որի կարգավիճակը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:&gt;&gt;:</p> <p>2) 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված &lt;հոդված 16&gt;-ի 3-րդ կետի 2-</p>	<p>Չի ընդունվել (1/, 2/, 3/):</p>	<p>&lt;&lt; կառավարության որոշմամբ հաստատված կանոնադրությամբ սահմանված է &lt;&lt;Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման հանձնաժողով&gt;&gt; գործակալության կարգավիճակը.այն հանդիսանում է &lt;&lt; կրթության և գիտության նախարարության առանձնացված ստորաբաժանում :</p>

	<p>րդ նախադասությունը շարադրել հետևյալ կերպ &lt;Գիտական աստիճանների շնորհման որոշումները հաստատում և համապատասխան վկայագրերով ամրագրում է ՀՀ ԲՈՀ-ը՝ հիմք ընդունելով որակավորման գործի ուսումնասիրությունը:&gt;:</p> <p>3) 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված &lt;հոդված 16&gt;-ի 4-րդ կետի 2-րդ նախադասությունը շարադրել հետևյալ կերպ &lt;Գիտական կոչումների շնորհման որոշումները հաստատում և համապատասխան դիպլոմներով ամրագրում է ՀՀ ԲՈՀ-ը՝ հիմք ընդունելով որակավորման գործի ուսումնասիրությունը:&gt;:</p> <p>4) 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված &lt;հոդված 16&gt;-ի 5-րդ և 6-րդ կետերում &lt;&lt;պահանջներին&gt; բառերը փոխարինել &lt;չափանիշներին&gt; բառերով:</p> <p>5) 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված &lt;հոդված 16&gt;-ը լրացնել 7-րդ կետով. &lt; 7. Գիտության տվյալ բնագավառում գիտական աստիճանի և (կամ) գիտական կոչման առկայությունը հաշվի է առնվում գիտնականի կողմից գիտական կամ ուսումնական կերպական պաշտոնին հավակնելու դեպքում:&gt;:</p> <p>6) Օրենքի նախագիծը լրացնել նոր 1.1 հոդվածով.</p> <p>&lt;հոդված 1.1 Օրենքի 1-ին հոդվածը լրացնել &lt;&lt;Որակավորման գործ - մասնագիտական կամ</p>	<p>4. Ընդունվել է :</p> <p>5. Չի ընդունվել :</p> <p>6. Չի ընդունվել:</p>	<p>4. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p> <p>5. ՀՀ օրենսդրությամբ սահմանված են տարբեր պաշտոնների ներկայացվող պահանջներ, այդ թվում նաև գիտական աստիճանի կամ կոչման պահանջը, ուստի օրենքում այս դրույթը ամրագրել նպատակահարմար չէ, անհասկանալի է նաև &lt;&lt;ուսումնական կերպական պաշտոն&gt;&gt; հասկացությունը:</p> <p>6. &lt;&lt;Որակավորման գործ&gt;&gt; հասկացությունը կներառվի ՀՀ կառավարության հաստատած աստիճանաշնորհման</p>
--	--	--	--

	<p>գիտական խորհուրդների կողմից գիտական աստիճան կամ գիտական կոչում շնորհելու մասին որոշումները հաստատելու /բեկանելու/ համար հիմք հանդիսացող անհրաժեշտ նյութերի և փաստաթղթերի փաթեթ&gt; բառերով&gt;:</p>		<p>կանոնակարգում:</p>
<p>3 . ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հ.Բիշարյան</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված 16-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Գիտական աստիճանաշնորհման,ինչպես նաև գիտական կազմակերպություններին և բարձրագույն ուսումնական հաստատություններին առընթեր գործող մասնագիտական խորհուրդների որոշումների հաստատման կանոնակարգերը և վկայագրերի նմուշները հաստատում է կառավարությունը:</p> <p>2.Նախագծի 1-ին հոդվածում նոր խմբագրությամբ շարադրված 16-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին պարբերությունից հետո ավելացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.« Գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհուրդները ձևավորվում են գիտական կազմակերպությունների և բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից: Մասնագիտական խորհուրդների ձևավորման կարգը և գործունեությանը ներկայացվող պահանջները սահմանում է կառավարությունը: »</p>	<p>Չի ընդունվել:</p> <p>Չի ընդունվել:</p>	<p>Որոշումների հաստատումը անբաժանելի մասն է կազմում խորհուրդների աշխատանքի և «մասնագիտական խորհուրդների որոշումների հաստատման կանոնակարգերը» ՀՀ կառավարության կողմից առանձին սահմանելու անհրաժեշտությունը չկա. ՀՀ կառավարության 1997 թվականի <i>օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված աստիճանաշնորհման կանոնակարգում նախատեսված է մասնագիտական խորհուրդին վերաբերող բաժին, որտեղ սահմանված են խորհուրդների ձևավորմանը ներկայացվող պահանջներ:</i></p>